

Ե Ր Գ Խ Ա Զ Ա Խ Ի



Ամպը ըզլուսնիւ արկանեն քող,
Հողմք ըզմայրիս շարժլեն ի դող .
Ահա ցայգուն խուճապք հասին
Ո՛վ նընջեսցէ ի մացառին :

Այլ գոռ խաղախն անզանգիտակ
Պընդէ զկօշիկ լարտախուրակ ,
Զպերեւեշտից հիւսեալ ցըցունս
Անդընդահերձ գընայ 'նդ մկանունս :

Ակօսք թիոցըն փըրփրալիր
Յօտար ափունս ծածանին ցիր : —
Ո՛վ Տէր , գըթա յողիս նոցին
Որ թէ հինիս հանդիպեսցին : —

Զի պէս անդեղ յաւարէ կեայ ,
Ուղիք արտասուաց չազդեն ի սա .
Թըռչի մանրէ ի սուր ճիրանս
Զհաւատացեալ եւ զանհաւանս :

Ի չար օդոց չիք նըմա խէթ ,
Շաղակրատանք չեն նըմա պէտ .
Գետօքն արեան՝ զոր յար հեղու
Ամենեցուն է ահարկու :

Լըռեալ անծուփ կայ ծովըն Սեաւ .
Իսկ յո՛վ եւ երբ խաղախ թըռեաւ .
Բեկտեալ նաւակն ի շամանդաղ՝
Զինքըն թաքոյց հետախաղաղ .

Եւ զերդ երբեմն առ ի դիւէն
Թաւալեցան բերդք ամրաչէն ,
Որոց ըստուեր սոսկավիթխար
Տներեր ափանց հովանանայր :

Յազատութիւն երկայնամի
Օժտէ խաղախ զիւր մանկըտի ,
Որոց ոտկունք աներկրակոխ՝
Նըման հողմոց են մըշտափոխ :

Ի յասպատանգս աճեն նորա
Սլացեալ ի կանչ հուռուս հուռուս .

Չեւ ի սպիտակ ծաղկեալ ալիս
Հընձին գիւաց ի գերանդիս :
Վայ շամբասուն տամ ես պորոց
Որ Տներերայ քունեն ի ծոց .
Ահա ալիքս այս որ զարթնուն
Կըլցեն ընդ հուպ զամեն թըռչուն :
Այսպէս կենցաղս է մեզ հաճոյ ,
Օթել ուրեք չէ մեզ պիտոյ .
Մեր հայրենիք են համաշխարհ ,
Տէգք ծարաւեալք շառնուն գաղար .
Իցիւ թէ գայր ոք ինձ բանբեր ,
Եթէ գուցէ ոք երկրասեր՝
Որոյ զնիզակս Ուքրանիու
Տեսեալ հեռուստ՝ ոչ փախնուցու :
Ոստնու յերազ խազախ ի ձին
Հապ ի սուլել Աթամանին ,
Եւ փափկերախ սօսն իւր ճայիկ
Քառատրոփէ ճախրասլացիկ :
Խաղաղ ծաւալ ծոփն ալէւէտ՝
Պուրակք ի նիրհ անդորրաւէտ
Խռովին յանկարծ խօշիւն խազմիս
Մինչ վազվազեմք առ թըշնամիս :
Վայ որ լինին մեզ հիւրընկալ՝
Յոտընկելիս չըկան յերկար .
Հազիւ բաւեն հազ նըշմարել
Չաշտէ զմըտրակ , զերիվար մեր :
Դըստերք մեր սթափք են լուսածղիք .
Եւ գանգրագեղ հոյլ խոպոպիք
Ծալ ծալ ծըփին մինչեւ յազդեր .
Մրազարդ են յօնք , կապոյտ աչեր :
Այլ մեզ միայն նոցին վառ գեղ ,
Մեր եւ նոցայն քաղցրիկ գեղգեղ ,
Եւ յարտասուս ծովացեալ բիրք
Յերթ մեր ի ուզմ՝ բոսորատիպ :
Վա՛յ որ յեզերըս Տներերայ
Խազախ ծընեալ ի լոյս խայտայ .
Նա երանի զոր կենակցորդ
Ընտրէ ինքեան խազախ օրւորդ :